# ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

## ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՔԱՌԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՂԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

### ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՆ ԲՈՒԼԳԱՆԻՆԻՆ

ՄՈՍԿՎԱ

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի քառասունամյակի առիթով հաճեցեք ընդունել, Պարոն Նախագահ, Մեր սրտագին շնորհավորությունները ու լավագույն բարեմաղթությունները բազմազգ Սովետական Միության՝ ամբողջ աշխարհում խաղաղության հզոր պատվարի՝ հետագա բարգավաճման համար:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հաճեցեք ընդունել Մեր սրտագին ողջույնները ու շնորհավորանքները Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի քառասուներորդ տարեդարձի առթիվ: Մաղթում ենք սովետական ժողովուրդներին խաղաղ ու երջանիկ կյանք, իսկ Սովետական մեծ Հայրենիքին՝ նորանոր հաջողություններ իր հզոր վերելքի ճամբին:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հաճեցեք ընդունել Մեր ջերմ ողջույնները ու շնորհավորությունները Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի քառասունամյակի առթիվ: Թո՛ղ ավելի ու ավելի ծաղկի և հզորանա Սովետական մեծ Միությունը և մեր վերածնված Մայր Հայրենիքը՝ բարօրության և խաղաղության մեջ:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 40-րդ տարեդարձի առթիվ ընդունեցեք Մեր ջերմ ողջույնները ու շնորհավորանքները: Աղոթում ենք առ Աստված Սովետական պետության անսասանության և մեր մեծ Հայրենիքի եղբայրական ժողովուրդների խաղաղ ու երջանիկ կյանքի համար:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

## ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Սովետական Հայաստանի կառավարության և իմ անունից հայտնում ենք մեր սրտագին շնորհակալությունը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի փառապանծ քառասնամյակի համաժողովրդական տոնի առթիվ հղած Ձեր շնորհավորանքների համար:

ՔՈՉԻՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

---

## ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի և իմ անունից հայտնում եմ ջերմագին շնորհակալություն Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայի քառասնամյակի մեծ տոնի առթիվ հղած Ձեր շնորհավորանքների համար:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ